Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1529 - Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգը միտված է անձի, ընտանիքի և հասարակության մեջ ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու անհրաժեշտության գաղափարը սերմանելուն, պետական և ազգային մտածողությունն ամրապնդելու գործընթացն ապահովելուն: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը Հայաստանի Հանրապետության համար ունեն առաջնային նշանակություն, քանի որ դրանք նախ և առաջ միտված են ֆիզիկապես կոփված, կրթված, հայրենասեր սերնդի ձևավորմանը:

2. Բնակչության ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովումը, բնակչության բոլոր տարիքային խմբերի համար առողջ ապրելակերպի արմատավորման գործում նպաստավոր պայմանների ստեղծումը պետության քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից են:

3. Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2023 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) ներառում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում 2023 թվականին պետական քաղաքականության իրականացման համար նախատեսված միջոցառումները, ծրագրերն ու գործողությունները:

II. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

4. Կատարելով զարգացնող, դաստիարակչական, մարզական, առողջարարական, հայրենասիրական, հաղորդակցական, տնտեսական և մի շարք այլ գործառույթներ՝ սպորտը միավորում և կոորդինացնում է բնակչության տարբեր տարիքային խմբերին, համախմբում և առաջ է մղում հասարակությանը:

5. Սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում հասարակության զարգացման, ինչպես նաև հոգևոր և ֆիզիկական առողջության համար առանցքային դեր են կատարում զանգվածային սպորտն ու ֆիզիկական կուլտուրան:

6. Զանգվածային սպորտը կոչված է լուծելու սոցիալ-տնտեսական շատ հիմնախնդիրներ. այն համախմբում է հասարակությանը, երիտասարդությանը զերծ է պահում վատ սովորություններից ու զբաղմունքներից, երկարացնում է կյանքի տևողությունը և բարձրացնում որակական մակարդակը:

7. Սպորտում բարձրագույն նվաճումների գրանցվող ռեկորդները, տարբեր մարզաձևերում, այդ թվում՝ ազգային, արձանագրվող հաջողությունները մեծագույն խթան են հանդիսանում զանգվածային սպորտի զարգացման համար: Մյուս կողմից՝ (փոխադարձաբար) հենց սպորտի մասսայականացումից է անցում կատարվում բարձրագույն սպորտային վարպետության:

8. Նշվածն իրականացնելու համար անհրաժեշտ է համակցված միջոցառումների համակարգ, որը պայմաններ կստեղծի մարդկանց առօրյա կյանքում ֆիզիկական կուլտուրայի արմատավորման և բնակչության առողջության մակարդակի բարձրացման համար:

9. Առողջ ապրելակերպ վարելու նկատմամբ բնակչության դրական վերաբերմունքի ձևավորման, կանոնավոր կերպով ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող և մարզական զանգվածային միջոցառումներին մասնակցող բնակչության թվի ավելացման նպատակով 2021 թվականին իրականացվել են՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշար՝ միջոցառմանը մասնակցել է շուրջ 350 մարդ, որից՝ 210 տղամարդ, 140 կին.

2) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշար՝ միջոցառմանը մասնակցել է շուրջ 1500 մարդ, որից՝ 1050 տղամարդ, 450 կին.

3) Հանրապետական ուսանողական 22-րդ մարզական խաղեր՝ **ա**նցկացվել է 8 մարզաձևից՝ խաղերին մասնակցել է 22 բուհի 1020 ուսանող, որից՝ 600 տղամարդ, 420 կին.

4) Հայաստանի Հանրապետության պետական մարմինների միջև հրաձգության հանրապետական մրցումներ՝ միջոցառմանն ընդհանուր առմամբ մասնակցել են 60 պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շուրջ 400 աշխատակիցներ, որից՝ 200 տղամարդ, 200 կին.

5) 2022 թվականի փետրվար - հունիս ամիսներին անցկացվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշար՝ առաջին տարածքային փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում, երկրորդ եզրափակիչ փուլ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Միջոցառմանը մասնակցել է 1620 մարդ.

6) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում՝ միջոցառմանն ընդհանուր առմամբ մասնակցել են 246 դպրոցի 1724 աշակերտներ.

7) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարին մասնակցել է 365 հեծանվորդ.

8) «Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառում՝ միջոցառմանը մասնակցել է 12060 աշակերտ (1-3-րդ դասարաններ՝ 559 դպրոց, 5590 աշակերտ, 4-6-րդ դասարաններ՝ 647 դպրոց, 6470 աշակերտ):

9) «Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա» մարզական միջոցառում՝ սպարտակիադայի ծրագրով նախատեսված՝ ֆուտզալի, հնգամարտի (աթլետիկական), հրաձգության և բազկամարտի մրցումներին մասնակցել են 426 դպրոցականներ : 4-րդ՝ հանրապետական փուլի բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, շախմատի և լողափնյա վոլեյբոլի մրցումները կանցկացվեն մինչև 2022 թվականի դեկտեմբերը:

10. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի համակարգում գործող 26 մանկապատանեկան մարզադպրոց հանդիսացող պետական

ոչ առևտրային կազմակերպություններում պարապում է 9654 սան, որից՝ տղաները՝ 7927, աղջիկները՝ 1727:

11. 2021 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված 34 ֆեդերացիաների մարզաձևերի տարբեր տարիքային խմբերի Հայաստանի Հանրապետության առաջնություններին մասնակցել են 7254 տղամարդ, 1980 կին, տարբեր տարիքային խմբերի Եվրոպայի, աշխարհի առաջնություններին և միջազգային մրցաշարերին՝ 2008 տղամարդ, 180 կին, տարբեր տարիքային խմբերի ուսումնամարզական հավաքներին՝ 2380 տղամարդ, 280 կին:

12. 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պետական աջակցության ծրագրում ընդգրկված 33 ֆեդերացիաների մարզաձևերի տարբեր տարիքային խմբերի Հայաստանի Հանրապետության առաջնություններին մասնակցել են 5306 տղամարդ, 1050 կին, տարբեր տարիքային խմբերի Եվրոպայի, աշխարհի առաջնություններին և միջազգային մրցաշարերին՝ 650 տղամարդ, 50 կին, տարբեր տարիքային խմբերի ուսումնամարզական հավաքներին՝ 1162 տղամարդ, 100 կին:

13. Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, ուշու և շախմատ մարզաձևերի) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում, համաշխարհային ունիվերսիադայում և եվրոպական խաղերում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, խրախուսման շրջանակներում, դրամական պարգևներ են տրվել՝ 8 կին և 101 տղամարդ մարզիկների:

14. Պետական աջակցության ծրագրում ընդգրկված 6 հաշմանդամային մարզական կազմակերպությունների կողմից իրականացվել են 7 Հայաստանի Հանրապետության առաջնություն, 4 ուսումնամարզական հավաք, 1 զանգվածային մարզական միջոցառում, հաշմանդամություն ունեցող մարզիկները մասնակցել են 5 միջազգային մրցաշարերի, իսկ հաշմանդամային բազկամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի Հանրապետության հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի մարզիկները նվաճել են 3 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզե մեդալներ:

15. 2022 թվականին Բրազիլիայի Կալիաս քաղաքում կայացած խուլերի ամառային սուրդլիմպիկ խաղերին խուլ ըմբիշները տարբեր քաշային կարգերում նվաճել են 5 բրոնզե մեդալ, իսկ Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում անցկացված հաշմանդամային

բազկամարտի Եվրոպայի առաջնությանը հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի մարզիկները տարբեր դասակարգումներում և քաշային կարգերում, աջ և ձախ ձեռքով, նվաճել են 11 ոսկե, 5 արծաթե և 6 բրոնզե մեդալներ:

16. Վերոնշյալ ծրագրերը շարունակական են և նպաստում են բնակչության բոլոր տարիքային խմբերի շրջանում ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելուն, առողջ ապրելակերպի գաղափարի տարածմանը. առողջության ամրապնդմանը և ֆիզիկական զարգացմանը, երկարակեցության ապահովմանը:

III. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

17. Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների հիմնադրույթների համաձայն 2023 թվականի ընթացքում հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար արդյունավետ պայմանների ստեղծումն է, հանրապետության բնակչության տարբեր տարիքային խմբերի համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պահանջի ձևավորումն ու խթանումն է:

18. Ծրագրի խնդիրներն են՝

1) բնակչության ֆիզիկական դաստիարակության համակարգի արդյունավետության բարձրացման և զարգացման համար պայմանների ստեղծումը.

2) բնակչության առողջացման, ֆիզիկական զարգացման անընդհատության ապահովման և ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացումը.

3) օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին և այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար մարզիկների և մարզաձևերի ազգային հավաքական թիմերի արդյունավետ նախապատրաստման և մասնակցության ապահովումը.

4) մարզական հերթափոխի, բարձրակարգ մարզիկների պատրաստումը.

5) կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի զարգացումը.

6) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային կապերի ընդլայնումը:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

19. Ակնկալվող արդյունքներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջ ապրելակերպ վարելու նկատմամբ բնակչության դրական վերաբերմունքի ձևավորումը.

2) կանոնավոր կերպով սպորտով և ֆիզկուլտուրայով զբաղվող և մարզական զանգվածային միջոցառումներին մասնակցող մարդկանց (այդ թվում՝ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց) թվի ավելացումը.

3) բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումը և երկարակեցության ապահովումը.

4) բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը, ինչպես նաև օլիմպիական, պարալիմպիկ և սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների արձանագրումը.

5) ֆիզիկապես կոփված երիտասարդների ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

20. Ծրագրում և միջոցառումների ցանկում նախանշված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2023 թվականի հիմնական գերակայությունները, կոնկրետ միջոցառումներն ու դրանց կատարման ժամկետները, ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրն ու չափը:

21. Ծրագիրը նախատեսված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության իրականացման համար:

V. ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Ծրագրի գերակայություններն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ակտիվ քաղաքականության իրագործումը, որի նպատակն է ակտիվ մասնակցություն աշխարհում, Եվրոպայում և ԱՊՀ տարածքում ընթացող ներգրավման գործընթացներին, սպորտային միջոցառումների միջոցով փոխըմբռնման և համագործակցության եզրերի հաստատումը.

2) ֆիզիկական դաստիարակության և զանգվածային սպորտի զարգացումը, որը ներառում է բնակչության բոլոր տարիքային խմբերի՝ նախադպրոցականների, դպրոցականների, ուսանողների, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության, հաշմանդամություն ունեցող անձանց, գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակիչների, տարեցների ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստականության և ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովումը, ըստ բնակության վայրի՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը.

3) մանկապատանեկան սպորտի զարգացումը և մարզական հերթափոխի պատրաստումը, ինչպես նաև ազգային ավանդական մարզաձևերի զարգացումը և տարածումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ցանցի զարգացումն ու ամրապնդումը, կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, բուժսպասարկման կատարելագործումը.

4) բարձրագույն նվաճումների սպորտի զարգացումը, որը ենթադրում է նաև ադապտիվ սպորտի զարգացումը, օլիմպիական գաղափարների տարածումը, դոպինգի դեմ պայքարի հսկողության ուժեղացումը, մարզական արդյունքների բարելավումը:

VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

23. Ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է:

VII. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

24. Սույն որոշման N 2 հավելվածով հաստատված յուրաքանչյուր միջոցառման կատարման վերաբերյալ պատասխանատու կատարող մարմինը տվյալ տարվա

առաջին կիսամյակի ավարտից և տարվա ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում միջոցառումների իրականացման ընթացքի մասին հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ